այնպիսի անբաւականութիւն, որ կարող է կարգապահութեան սկզբունքներին վնասել։ Ֆրիդրիխ Մեծը նոյնպէս մտցրեց ծխախոտի արտօնութիւնը, բայց նա, չը կամենալով ծանրաբեռնել խեղճերին, ոչնչացրեց հացի և տաւարի հարկը։ Սրանով նա զանազանվում է մեր կանցլերից, որ ամենից առաջ հարկ դրեց հացի և մսի վրա։" Բիւստերի ճառից և մի քանի պատգամաւորների նըկատողութիւններից յետոյ ռայխստագի նիստը փակվեցաւ։

Իշխան Բիսմարկի պարլամենտական վերջին ճաշի ժամանակ խօսվեցաւ դիպլոմատիական գործածական լեզուի մասին։ Մինչև այժմ ֆրանսիական լեզուն տիրապետող է դիպլոմատիական յարաբերութիւնների ժամանակ, բայց գերմանական դիպլոմատները գրագրութիւն են անում գերմանական լեզուով, թէպէտ ստացված պատասխանները ուրիշ լեզուներով են լինում գրված։ Պարլամենտական գործերի մասին խօսակցութեան ժամանակ իշխան Բիսմարկ յայտնեց, որ պարլամենտական այս շրջանին նա անհամաձայնութիւն չի ունենայ ռայխստագի հետ և որ նա բոլորովին մտադիր չէ արձակել այժմեան ռայխստագը։ Ցունվարին նա կը գումարի պրուսական սէյմը, իսկ զատկից յետոյ ռայխստագը։ Գահական ճառի մէջ յիշված խնդիրները միանգամից չին առաջարկվի ռայխստագին։ Կայսրը նրանց իսկոյն չի հաստատի, որովհետև նա գիտէ, որ այդ գործի համար բաւական ժամանակ է հարկաւոր։

ԱՆԳԼԻԱ

Լօրդ Գրենվիլ ուղարկեց անգլիական հիւպատոսին Եգիպտոսում հետևեալ հեռագիրը Անգլիայի քաղաքականութեան վերաբերութեամբ Եգիպտոսում։ „Անգլիական քաղաքականութիւնը Եգիպտոսի մէջ ուրիշ նըպատակ չունի բացի այդ երկրի զարգացումը, վայելելով սուլթանների ֆիրմանների համեմատ ազատութիւնը։ Եգիպտոսի զարգացումը, ինչպէս և ուրիշ երկիրների, կախված է ժողովրդի առաջադիմութիւնից և բարօրութիւնից։ Այդ պատճառով անգլիական կառավարութիւնը միշտ խորհուրդ է տուել խեդիվին ազատել ժողովրդին նրա ընկճված դրութիւնից։ Լուսաւորութեան տարածումը, ծանր հարկերի ոչնչացնելը, պարտադիր աշխատանքի թեթևացնելը, այդ բոլորը արվեցաւ եգիպտական ժողովրդին ֆրանսիական և անգլիական վերահսկողների օգնութեամբ և միջամտութեամբ։ Աւելորդ ենք համարում երկարօրէն խօսել, որ Եգիպտոսի համար անհրաժեշտ է վայելել իր անկախութիւնը։ Եթէ անգլիական կառավարութիւնը արգելքներ դնէր այդ անկախութեան զարգացմանը, դա հակառակ կը լինէր մեր սեփական աւանդութիւններին։ Եթէ Եգիպտոսում կասկածում են մեր գործունէութեան եղանակի մասին, դժուար չէ ոչնչացնել այդ կասկածները գրական ապացոյցներով։ Միւս կողմից Եգիպտոսը Թիւրքիայի հետ միացնող կապը մի գրաւական է օտար միջամտութեան դէմ։ Հէնց որ այդ կապը կոչնչանայ, Եգիպտոսը փառասէր մրցողութիւնների զոհ կը դառնայ։ Այդ պատճառով մենք հարկաւոր ենք համարում պահպանել այդ կապը։ Միայն անիշխանութիւնը կարող է պատճառ դառնալ մեր քաղաքականութեան փոփոխման Եգիպտոսի մէջ։ Բայց մենք յոյս ունենք, որ խեդիվը և Շէրիֆ-փաշա այդպիսի անկարգութիւնների առաջը կառնեն։ Մենք առիթ ունենք կարծելու, որ ֆրանսիական կառավարութիւնն էլ այդպէս է նայում գործին։ Առաջնորդված անշահասէր նպատակներից Ֆրանսիան և Անգլիան մեծ ծառայութիւններ մատուցին Եգիպտոսի ֆինանսական և նիւթական դրութեան բարւոքմանը։ Նոյն բանին կարելի է սպասել և ապագայում, եթէ գըլխաւոր նպատակը եգիպտական ժողովրդի օգուտը կը լինի։ Բայց Ֆրանսիայի կամ Անգլիայի կողմից աշխատանքը իր ազդեցութիւնը ընդարձակելու մասին վերջ կը դնի միաձայն գործունէութեանը։"

Անգլիական լրագիրները գրեթէ միաձայն պահանջում են ստիպողական նոր միջոցների գործադրութիւն Իրլանդիայի մէջ կարգապահութիւնը վերականգնելու մասին։ Բայց ոչ ոք չը գիտէ, թէ այդ նպատակով կառավարութիւնը ինչ կարող է անել։ Առանց այդ էլ Իրլանդիայի մէջ պահվում են 50,000 զօրք և 10,000 պօլիցիականներ։ Իրլանդիայի փոխարքան և իրլանդական գործերի մինիստր Ֆօրստեր կարող են պաշարված դրութիւն յայտնել, երբ կամենան, և կալանաւորել ամենքին, ում կամենան։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 18 Նոյեմբերի

Ներսէս պատրիարքի յոյժ սակաւաթիւ, բայց բանաւորեալ թշնամիներուն անունները և զանազան էնթրիկները յայտնի են ձեզի։ Այսոնց ամբաստանութեանց գլխաւոր կէտն այն է թէ «Պատրիարքն Թիւրք կառավարութեան հետ այն կերպով վարուեցաւ մինչև հիմայ հայկական հարցի նկատմամբ՝ որ Բ. Դուռը զայրանալով ընկսաւ առաւել ևս հալածել ոչ միայն Հայաստանի հայերը, այլ և Թիւրքիաբնակ հայերն առհասարակ։ Այսպէսով ոչ միայն բարենորոգմունք չիրականացան, այլ և աւելի վատթար եղաւ հայոց կացութիւնը»։

Մի խօսք որքան և սուտ, անտրամաբան ըլլայ, երկար ատեն կրկնուելով կարելի է որ ճշմարտութեան մի երևոյթ առնէ, ինչպէս եղած են ժողովրդեան բերանը գտնուած հազարաւոր յիմար առածներու համար։ Հարկ է ուրեմն միանգամ ընդ միշտ ցոյց տալ թէ որ աստիճան անտեղի, մտացածին, չարամիտ է այս ամբաստանութիւնը և թէ որքան եղելութեանց բնական բերմունքն են երեք տարիէ ի վեր հայոց ազգին գլխուն պատահածները։

Զիմք կարծեր որ գտնուի մի հայ, որքան կուրացած և թրքամոլ խել ըլլայ, որ տրտնջայ թէ ինչու հայկական հարցը միջազգային մի հարց եղաւ, կամ թէ ինչու գտնուեցան այնքան անքաղաքագէտ հայեր, որք հայոց վիճակը օտար տէրութեանց միջամտութեամբը բարւոքել փափաքեցան։ Այս ըստ ինքեան փրկարար վճռին արծակուելէ վերջը, կը մնար ուրեմն ժամ առ ժամ անոր գործադրութեանը սպասել և բնական էր որ ով որ պիտի օգուտ քաղէր անկէ, ամենէն աւելի նա անհամբեր գտնուէր տեսնելու այդ խոստումներուն վաղ ընդ փոյթ իրականանալը։ Պաշտպան տէրութիւնք ուրիշ հարցերով զբաղած ըլլալով մինչև հիմայ, Թիւրքը, ինքն իր կամօք, պիտի ներմուծէր այդ արմատական բարենորոգումներն ի Հայաստան և հետզհետէ ծանուցանէր վեց մեծ տէրութեանց։ Բայց Թիւրքը ոչ միայն անհոգ այլ և ընդդիմադիր եղած է և պիտի ըլլայ մինչև վերջը այս տեսակ ձեռնարկութեանց, վասն զի տաճկութիւնն Եւրոպայէն արտաքսուած, Աֆրիկէէն յուսահատ, Ասիան միայն կը նկատէ իբրև իւր վերջին ապաստանարանն և մեծ երկիւղ ունի որ նա ևս իւր իշխանութենէն չը պրծնի այլ և այլ վարչական ներքին փոփոխութեանց պատրուակաւ։ Հետևաբար ոչ մի զգալի բարենորոգումն ըրած չըլլալով, չէր ալ կարող ծանուցանել որ և է մի կատարուած բան։ Թիւրքական խորամանկութեամբ մինչև ցայժմ նա կը յուսայ որ խնդիրն երբ այսպէս հնանայ, գուցէ և մոռացութեան մէջ կիյնի։

Եթէ այն միջոցին հայ ազգը խմբուէր, կամ անոր գլուխը յանուն ազգին, ամենայն մեղմութեամբ և ամենայն իրաւամբ, մի կողմէն իր գանգատները նորոգեց, միւս կողմէն յիշեցուց որու որ անկ է այն հանդիսապէս եղած խոստումը, ինչ կայ այդ վարմունքի մէջ անբնական և անքաղաքագէտ։

Հարստահարութեանց բազմապատկելն, նիւթական ճնշմանց վրայ բարոյական ճնշմանց ևս յաւելուլն ուրիշ բան չը նշանակեն, եթէ ոչ այդ բարենորոգմանց ևս քան զևս ստիպողական ըլլալն, որոնց համար Թիւրք կառավարութիւնն ամեն ճիգ կը թափէ որ թէ հայերն և թէ մեծ տէրութիւններն ձայն չը բարձրացնեն բնաւ։

Այս նպատակին հասնելու համար Սուլթանին նախարարներն ահ ու սոսկում կաշխատեն ածանցել Թիւրքիաբնակ հայոց սրտին մէջ, սպառնալով ջնջել հայն իր արմատէն։ Սայիդ փաշան չէր որ ըստ Բարիզի Débats լրագրի թղթակցին թէ «հայոց հարցը մինչև սկսի, մի հայ չը պիտի մնայ Թիւրքիայի մէջ» իսկ մեծ տէրութեանց նկատմամբ կաշխատեն խաբուապատիր խոստումներով յետաձգել արմատական բարենորոգումները և կը տեսնենք որ մինչև հիմայ յաջողեցան։

Եթէ Թիւրքը մասնաւոր մի ատելութիւն ցոյց կը տայ հայկական տարրին դէմ, եթէ զազանական ձեռնարկութիւններով հայուն գոյութիւնն իսկ անյետացնել կը նկրտի, ով է այդ տեղ մեղաւոր և հարկ էր որ Ներսէս պատրիարքն անփոյթ մնար բոլորովին 61-դ յօդուածին շուտով գործադրուելուն համար, վախնալով որ մի գուցէ Թրքաց զայրոյթը գրգռէ։ Այս յօդուածին խմբագրուելէն վերջը, որպէս զի չը պատահէր հայոց գլխին ինչ որ այժմ կը տեսնենք, մի ճանապարհ միայն կար, այն էր՝ ոչ միայն անխօսուկ մնալ հայոց յոռի վիճակին վրայ, այլ և փառաբանել զԱստուած ամեն անգամ որ Թիւրքըն, ըստ իւր վաղեմի սովորութեան, հայու գլխին իւր լախտը իջեցնէր։ Պէտք էր որ պատրիարքն, ամեն անգամ որ տեղեկութիւն խնդրէին իրմէ իւր ժողովրդեան վիճակին վրայ, ոչինչ գանգատ չարտասանէր և երբեմն իսկ պատրիարքական կնիքով պաշտօնական յայտարարութիւններ ընէր ըսելով թէ «Հայոց ազգն որ ի Թիւրքիա՝ շատ երջանիկ մի կացութեան մէջ է և Հայաստան կատարեալ ապահովութիւն և արդարութիւն կը տիրէ, ի շնորհս բարեգութ և հայրախնամ կառավարիչներու»։

Այսպէս պէտք էր վարուել ահա Ներսէսն, որպէս զի այժմեան իւր քսու և շահամոլ ոսոխներն չընէին այն անհիմն և յիմար ամբաստանութիւնը որով կը ձգտեն իւր անունը նսեմացնել և ներկայացնել զայն իբրև քաղաքական դաւադրութեանց միամիտ գործիքն։ Մի խնդիր է գիտնալ թէ՝ Ներսէսի տեղն եթէ մի ուրիշը ազգային վարչութեան գլուխը գտնուէր վերոյիշեալ լեզուն պիտի բանեցնէր, թէ կէտ առ կէտ Ներսէսին հետեւած ճանապարհին պիտի հետեւէր։ Հետաքրքիր է նաև կանխաւ իմանալ թէ այժմ անոր յաջորդողը պիտի կարողանա՞յ մեղմել Թրքաց թշնամական ոգին և ատելութիւնը հայոց դէմ, որք այնքան ստահակ են, որ կը յանդգնին աշխարհի առաջ յայտ առնել իրենց վիճակին ողորմելի ըլլալը։

Դարձեալ կըսեն «Թիւրք կառավարութեան, և մանաւանդ Սայիդ փաշայի ատելութիւնը գըլխաւորապէս Ներսէսի դէմ է և ազգն այդ անձնական ատելութեան զոհ կը գնայ»։

Ցե՞ն մտածել արդեօք թէ ինչ է այդ անձնական հակառակութիւնը գոյանալուն պատճառը, և դժուա՞ր է արդեօք տեսնել թէ սա յառաջ եկած է լոկ և միմիայն այն պատճառաւ, որ Ներսէսն մի պահ չէ դադարած խղճի մտօք իւր պարտքը կատարելէ։ Ներսէսի աթոռի վրայ եթէ Կարապետ կամ Ցակոբն ըլլային, նոյնպէս անհաճելի պիտի երևէին Սայիդին, սա տարբերութեամբ միայն, որ Ներսէսը Թրքական ատելութեան փոխադարձ, որ իւր փառքն ու պարծանքն է, կը վայելէ այն ամեն անոնց սէրն ու համարումը, որք սիրտ և բանականութիւն ունին։

Ներսէսի յաջորդը—եթէ կարելի է այսպիսի մարդոյ յաջորդել առանց ծիծաղելի յաւակնութեան—այսօր մի միջոց ունի, անոր հայ թշնամեաց, կամ որ նոյնն է, Բ. Դրան հաճելի անցնելու համար։ Այն է աթոռը բազմած ժամուն՝ իւր խօսքը հայոց ուղղելով «մի ևս տրտնջաք» ըսել, և դառնալով պաշտպան տէրութեանց ներկայացուցիչներուն սա յայտարարութիւնը ընել. «Խնդրեմ ձերումդ վսեմութիւններէ, որ իմացտաք ձեր կառավարութեանց՝ թէ Հայաստան ոչ մի բարենորոգմանց կարօտութիւն ունի. թէ թշնամիներուն զրպարտութիւն է, որ հարստահարութեանց սուտ պատմութիւններ հնարեցինք։ Ամեն բարիք լիովին կը վայելեն հայաբնակ գաւառները, և եթէ յիրաւի մեր լաւութեանը փափաքող էք, կը խնդրեմք որ 61-դ յօդուածը չեղեալ համարելով, ոչ ևս ձանձրացնէք մեր կառավարութիւնը, զմեզ պատրուակ ընելով։ Մեր իղձը, մեր բարօրութիւնը մի բանի մէջ կը կայանայ, այն է մինչև ի կատարած աշխարհի մընալ օսմանցւոյն բազկին կապված, հլու իբրև դիակ և հաւատարիմ որպէս շուն»։

Եթէ մի այսպիսի պատրիարք է այդ անձանց խնդրածը, թող չորոնեն շատ այժմեան եպիսկոպոսաց մէջ. դժուար չէ գտնալը։

Ե. Ս.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Գերմանական լրագիրները հաղորդում են որ Բեռլինի երրորդ և հինգերորդ ընտրողական շրջաններում ռայխստագի համար լրացուցիչ ընտրութիւնների մէջ ընտրված են պրօգրէսիստները Մունկէլ և Գիւնտէր։ Ասում են որ ադվօկատ Մունկէլ մանաւանդ անհաճելի է Բիսմարկին, որովհետև մի ժամանակ նա պաշտպան էր կոմս Արնիմի գործի մէջ Բիսմարկի դէմ։

—Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, որ ֆինանսական աշխարհի մի քանի խոշոր ներկայացուցիչներ ներկայացան մինիստրների խորհրդի նախագահին զանազան բացատրութիւններ պահանջելով ֆինանսների նոր մինիստր Ալան-Տարժէի պրօգրամայի առիթով. մի և նոյն ժամանակ նրանք ակնարկեցին չափից դուրս վերանորոգական տնտեսական քաղաքականութեան նշանաւոր անյարմարութեան վրա։ Գամբետտա պատասխանեց նրանց, որ կաբինէտի կամ ֆինանսների մինիստրութեան ապագայ դիտաւորութիւնների հարցը նրանց չէ վերաբերում, և որ բօրսայի գործը չէ խառնվել այդպիսի հարցերի մէջ։ Չափաւոր կուսակցութեան լրագիրները չեն հաւանում ներքին գործերի նոր մինիստրութեան կարգադրութիւնները և սաստիկ արմատական են համարում Պօլ-Բէրի յայտնութիւնները։ Պատգամաւորների ժողովի նախագահ Բրիսոնի օրգանը սաստիկ բանակռիւ է շարունակում Գամբետտայի լրագիրների հետ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 Նոյեմբերի։ „Прав. Вѣстн." լրագիրը հաղորդում է. Պետիգօրսկի շրջանի բաժանումը երկուսի՝ Նալչինսկի և Պետիգօրսկի, արդէն կայացաւ։ „Порядокъ" լրագիրը հաղորդում է. նոյեմբերի 23-ին 8½ ժամին երեկոյեան վախճանվեցաւ Պիրոգով։ „Новости" լրագիրը հաղորդում է. կովկասեան փոխարքայութեան ոչնչացնելը հաստատված է, ոչնչանում է նոյնպէս կովկասեան մասնաժողովը Ս. Պետերբուրգի մէջ։ Կովկասի կառավարութեան նոր ձևի մշակութիւնը կը վերջանայ 1882 թւականին։ Շեստակով առաջարկեց հիմնաւորապէս վերաքննել ռուսաց նաւահանգիստների կարգերը։

ԿԱԼԿՈՒՏԱ, 23 Նոյեմբերի։ Դեկտեմբերի 6-ին էմիրը կարշաւէ Կաբուլի վրա։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 Նոյեմբերի։ Այսօր 11 ժամին սկսվեցաւ գեներալ Մրօվինսկու, Ֆուրսօվի և Ցեգլեվի գործի քննութիւնը փակված դռներով և երդվեալ դատաւորների մասնակցութեամբ։ Մեղադրում է Մուրավեօվ։ Պաշտպանում են Սպասօվիչ, Գեբարդ, Պասսօվէր։ Վկաները 50 մարդ են։ Գործը երեք երկու օր կը տևի։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ